acba | VISA

Հարգելի՛ Visa Signature Limited Edition քարտի քարտապան

Դուք այն **500** բացառիկ քարտապաններից եք, ում ուղեկիցն է դառնում հայկական մշակույթի վեհությունը՝ արտացոլված արվեստի ու պրեմիում հնարավորությունների եզակի համադրությամբ: Visa Signature Limited Edition-ը պարզապես քարտ չէ, այն յուրահատուկ է իր դիզայնով և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ: Դուք հնարավորություն ունեք եռաչափ ձևաչափով հայտնվել Մարտիրոս Սարյանի կտավի ներսում, զգալ վարպետի վրձնած աշխարհի ջերմությունն ու էներգիան, հաղորդակցվել նրա արվեստի ուժի հետ ու դառնալ դրա մի մասնիկը:

Վայելե՛ք Visa Signature Limited Edition-ի առավելությունները, որոնք սահմանում են նոր չափանիշներ:

Բացահայտեք բացառիկը

Հարգանքով՝ Ակբա բանկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ուժի մեջ է՝ 01.05.2026թ.-ից

Ողջույնի խոսք — 1
Visa Signature Limited Edition քարտի առավելությունները — 3
Արտերկրի թանգարաններում քարտով կատարվող մուտքավճարների վերադարձ — 5
Անսահմանափակ անվճար մուտքերի հնարավորություն Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան — 6
«ԷՊՈՍ» պատմամշակութային փակ ակումբի առավելություններ — 7
Arloopa հավելվածի միջոցով քարտի դիզայնի սքանավորման հնարավորություն — 8
Անվճար մուտքեր օդանավակայանների DragonPass սպասասրահներ — 9
FastTrack ծառայության արտոնություններ Զվարթնոց միջազգային օդանավակայանում և մի շարք երկրների օդանավակայաններում — 10
Ուղեբեռի անվճար փաթեթավորում — 11
Անվճար կայանատեղի Զվարթնոց միջազգային օդանավակայանում — 12
Դիմավորման և աջակցման ծառայություն (YQnow Group) — 13
Ճանապարհորդական ապահովագրություն — 14
Գնումների ապահովագրություն — 16
Միջազգային բժշկական և տեղեկատվական աջակցություն ճանապարհորդողների համար — 17
Հյուրանոցների ամրագրումներ agoda.com, Booking.com, Visa Luxury Hotel Collection.com կայքերում՝ արտոնյալ պայմաններով — 18
Մեքենաների ամրագրումներ Avis.com, Rentalcars.com, SIXT.com կայքերում՝ արտոնյալ պայմաններով — 19
Անվճար ռոումինգ — 20
BookingBash հավելվածի արտոնություններ — 21
Concierge ծառայություն — 22
VisaConcierge չատ-բոտ — 23
Հաճախորդների աջակցության միջազգային ծառայություն (Global Customer Assistance Service (GCAS)) — 24

Visa Signature Limited Edition քարտի առավելությունները

Visa Signature Limited Edition քարտով հնարավոր է կազմակերպել երազանքների ճանապարհորդություն և անմոռանալի ժամանց՝ ունենալով հետևյալ առավելությունները.

1. Մշակութային՝

- Արտերկրի թանգարաններում քարտով կատարվող մուտքավճարների վերադարձ
- Անսահմանափակ անվճար մուտքերի հնարավորություն Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան քարտապանի և իր մեկ հյուրի համար
- «ԷՊՈՍ» պատմամշակութային փակ ակումբի անդամ դառնալու հնարավորություն
- Arloopa հավելվածի միջոցով քարտի դիզայնի սքանավորման հնարավորություն
- Տեղական թանգարաններում և մշակութային այլ վայրերում պարբերաբար առաջարկվող առավելություններ

2. Ճանապարհորդական՝

Օդանավակայանում.

- Անվճար մուտքեր DragonPass սպասասրահներ քարտապանի և իր մեկ հյուրի համար
- FastTrack ծառայության արտոնություններ Զվարթնոց միջազգային օդանավակայանում և մի շարք երկրներում քարտապանի և իր մեկ հյուրի համար
- Ուղեբեռի անվճար փաթեթավորում
- Անվճար կայանատեղի Զվարթնոց միջազգային օդանավակայանում
- Դիմավորման և աջակցման ծառայություն (YQnow Group)

Ճանապարհորդելիս.

- Ճանապարհորդական ապահովագրություն
- Գնումների ապահովագրություն ամբողջ աշխարհում
- Միջազգային բժշկական և տեղեկատվական աջակցություն
- Հյուրանոցների ամրագրումներ agoda.com, Booking.com, Visa Luxury Hotel Collection.com կայքերում՝ արտոնյալ պայմաններով
- Մեքենաների ամրագրումներ Avis.com, Rentalcars.com, SIXT.com կայքերում՝ արտոնյալ պայմաններով
- Անվճար ռոումինգ առաջարկներ
- BookingBash հավելվածի արտոնություններ
- Concierge ծառայություն
- VisaConcierge չատ-բոտ
- Հաճախորդների աջակցության միջազգային ծառայություն (Global Customer Assistance Service (GCAS))

1.1
Արտերկրի թանգարաններում քարտով կատարվող մուտքավճարների վերադարձ

Visa Signature Limited Edition քարտի քարտապանները հնարավորություն ունեն ճանապարհորդության ընթացքում այցելել աշխարհի լավագույն թանգարաններ և իրենց Visa Signature Limited Edition քարտով կատարված մուտքավճարների դիմաց ստանալ տարեկան մինչև 20000 ՀՀ դրամ գումարի վերադարձ քարտին:
Անհրաժեշտ է, որ մուտքավճարները կատարված լինեն թանգարաններում կամ թանգարանների պաշտոնական կայքէջերում:
Բանկի կողմից մուտքավճարների վերադարձը քարտային հաշվին կկատարվի յուրաքանչյուր ամիսը մեկ պարբերականությամբ՝ մուտքավճարի գումարը Բանկում ձևակերպվելուց հետո մինչև հաջորդ ամսվա 20-ը ներառյալ:

Առաջարկը գործում է մինչև 01.03.2027թ. ներառյալ:

1.2
Անսահմանափակ անվճար մուտքերի հնարավորություն Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան

Visa Signature Limited Edition քարտի քարտապանը և իր մեկ հյուրը հնարավորություն ունեն անսահմանափակ այցելել Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան և ծանոթանալ հայ մեծանուն նկարչի ստեղծագործական ժառանգությանն անվճար: Անհրաժեշտ է թանգարանում ներկայացնել միայն քարտը և անձը հաստատող փաստաթուղթը:

Առաջարկը գործում է մինչև 01.03.2027թ. ներառյալ:

1.3
«ԷՊՈՍ» պատմամշակութային փակ ակումբի առավելություններ

Visa Signature Limited Edition քարտի քարտապանը, քարտը ձեռք բերելով, արդեն իսկ դառնում է «ԷՊՈՍ» պատմամշակութային փակ ակումբի անդամ, ինչի արդյունքում կարող է օգտվել ակումբի կողմից առաջարկվող մի շարք առավելություններից: Առաջին այցի ժամանակ կարևոր է ներկայացնել Visa Signature Limited Edition քարտը, որը կապահովի առաջին մուտքը փակ ակումբ: Ակումբում կլրացվեն քարտապանի որոշ տվյալներ, որից հետո քարտապանը կկարողանա մուտք գործել ակումբ բիոմետրիկ սկանավորմամբ:

Visa Signature Limited Edition քարտի քարտապանին առաջին մուտքի ժամանակ կտրամադրվի հյուրասիրություն՝ կոկտեյլ: Փակ ակումբի անդամ դառնալու հիմնական առավելություններն են՝

- Հատուկ բիոմետրիկ սկանավորմամբ ակումբականը ապահովում է իր և իր հյուրերի մուտքը «ԷՊՈՍ»,
- Միշտ տեղեկացված է լինում և ծանուցվում է առաջիկա միջոցառումների, ցուցադրությունների, համերգների, ինչպես նաև միայն ակումբականների համար նախատեսված փակ միջոցառումների մասին,
- Հատուկ առավելություններ միջոցառման տոմսերի համար (հատուկ արժեք, նվեր տոմսեր, «Բարի գալուստ»-ի խմիչքի հյուրասիրություն և այլն),
- Հատուկ առաջարկներ ակումբականի տարեդարձի համար՝ երաժշտական ծրագիր, թեմատիկ կոկտեյլներ և այլն,
- Միայն ակումբականների համար նախատեսված միջոցառումներ (համերգներ, նոր խմիչքների համտես, ցուցադրություններ, փակ դիտումներ և այլն),
- Նոր ծանոթություններ, նոր միջավայր, իրական ակումբի գաղափարի շուրջ միավորված մարդիկ,

Առաջարկը գործում է մինչև 01.03.2027թ. ներառյալ:

1.4
Arloopa հավելվածի միջոցով քարտի դիզայնի սքանավորման հնարավորություն

Այսօր ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս նորովի զգալ արվեստը, և Visa Signature Limited Edition քարտը հենց այդ բացառիկ կամուրջն է անցյալի ու նորարարության միջև: Augmented Reality (AR) տեխնոլոգիայի և Arloopa հավելվածի միջոցով՝ քարտապանները կարող են կենդանացնել Մարտիրոս Սարյանի լեգենդար «Հայաստան» ստեղծագործությունը և հայտնվել վիրտուալ կտավի ներսում, զգալ Սարյանի վրձնած աշխարհի ջերմությունն ու էներգիան, հաղորդակցվել նրա արվեստի ուժի հետ՝ դառնալով դրա մի մասնիկը:

2.1
Անվճար մուտքեր օդնավակայանների DragonPass սպասասրահներ

Visa Signature Limited Edition քարտի քարտապանը և իր մեկ հյուրը հնարավորություն ունեն մեկ օրացուցային տարվա ընթացքում 2 անգամ անվճար օգտվելու աշխարհի ավելի քան 1300 օդանավակայաններում գործող DragonPass սպասասրահներից:

DragonPass սպասասրահները ապահովված են հանգստի համար անհրաժեշտ բոլոր հարմարություններով, ինչպիսիք են՝ ինտերնետ հասանելիություն (WiFi), հեռուստացույց, խմիչքներ և այլն: Օդանավակայանների սպասասրահներում ծառայությունները կարող են տարբեր լինել, դրանց ցանկը հասանելի է Visa Airport Companion բջջային հավելվածում:

Visa Signature Limited Edition քարտի քարտապանները հնարավորություն ունեն օգտվելու DragonPass համակարգից Visa Airport Companion բջջային հավելվածի կամ Visa Concierge Chatbot-ի միջոցով:

2.2
FastTrack ծառայության արտոնություններ Զվարթնոց միջազգային օդանավակայանում և մի շարք երկրների օդանավակայաններում

Visa Signature Limited Edition քարտի քարտապանը և իր հետ ճամփորդողը յուրաքանչյուր ուղևորության ընթացքում հնարավորություն ունեն տարվա ընթացքում 4 անգամ անվճար օգտվել Fast Track ծառայությունից «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում և 10 անգամ աշխարհի մի շարք երկրներում: Այն հնարավորություն է տալիս անցնել օդանավակայանի գրանցումներն առաջնահերթության սկզբունքով և խնայել Ձեր ժամանակը:

Visa Signature Limited Edition քարտի քարտապանների՝ ծառայությունից օգտվելու հասանելի հնարավորությունների չափով կարող է օգտվել նաև իրենց հետ ճամփորդողը:

2.3
Ուղեբեռի անվճար փաթեթավորում

Visa Signature Limited Edition քարտի քարտապանները, ներկայացնելով իրենց քարտը «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում, կարող են 6 անգամ անվճար օգտվել ուղեբեռի փաթեթավորման ծառայությունից: Ծառայությունից օգտվելու առավելագույն հնարավորությունը օրական 1 անգամ է:

2.4
Անվճար կայանատեղի Զվարթնոց միջազգային օդանավակայանում

Visa Signature Limited Edition քարտի քարտապանները հնարավորություն ունեն իրենց մեքենաները կայանել «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում Visa Concierge Chatbot-ի միջոցով: Առաջարկը գործում է հետևյալ փաթեթների համար.

- **1 ժամ տևողությամբ վաուչեր**
- **2 ժամ տևողությամբ վաուչեր**

Visa Signature Limited Edition քարտի քարտապանները հնարավորություն ունեն օգտվել ցանկացած փաթեթից տարվա ընթացքում 2 անգամ:

2.5
Դիմավորման և աջակցման ծառայություն (YQnow Group)

Visa Signature Limited Edition քարտով հնարավոր է օգտվել օդանավակայաններում դիմավորման և աջակցման ծառայությունից 20% զեղչով: Այս ծառայությունը հնարավորություն է տալիս առանց հերթերի օգտվել աշխարհի ավելի քան 500 օդանավակայաններից:

2.6
Ճանապարհորդական ապահովագրություն

Visa Signature Limited Edition քարտի հետ տրամադրվում են ճանապարհորդական ապահովագրության տարատեսակ ծածկույթներ, որոնցից օգտվելու համար անհրաժեշտ է, որ ճանապարհորդական տոմսերի և/կամ հյուրանոցի վճարումները կատարված լինեն Visa Signature Limited Edition քարտով:
Ճանապարհորդական ապահովագրությունը հնարավորություն է տալիս ճանապարհորդության ընթացքում պաշտպանված լինել մի շարք դեպքերից, ինչպիսիք են՝ հիվանդություն, ուղեբեռի ուշացում, թռիչքի բացթողում, թռիչքի ուշացում, հարձակում, գումարի կորուստ և այլն: Նման դեպքերում ապահովագրությունը կատարվում է ֆինանսական փոխհատուցման տեսքով:

Visa Signature Limited Edition քարտի ապահովագրական ծածկույթները գործում են ամբողջ աշխարհում և տրամադրվում են յուրաքանչյուր Visa Signature Limited Edition քարտապանին առանց որևէ հավելավճարի կամ միջնորդավճարի:
Ճանապարհորդական ապահովագրության ծածկույթները վերաբերում են ոչ միայն քարտապանին, այլ նաև նրա հետ ճանապարհորդող ամուսնուն կամ կնոջը և երեխաներին (մինչև 5 անձ):
Քարտապանին տրամադրվում է ապահովագրության առկայությունը վկայող հավաստագիր (Certificate of Insurance), որն անհրաժեշտության դեպքում կարելի է ներկայացնել նման երաշխիքներ պահանջող համապատասխան հաստատություններ:
Ապահովագրական պատահարի դեպքում քարտապանը պետք է կապ հաստատի աջակցման ծառայության հետ +971 (4) 253 6024 միջազգային հեռախոսահամարով կամ visaclaims@crawco.pl էլեկտրոնային հասցեով:
Visa Signature Limited Edition քարտի ապահովագրական փաթեթը ներառում է ապահովագրության հետևյալ ծածկույթները.

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿ	ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱՉԱՓ (բնակության երկրում ճանապարհորդելիս)	ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱՉԱՓ (բնակության երկրից դուրս ճանապարհորդելիս)
Փաստաթղթերի կորուստ		Մինչև 500 ԱՄՆ դոլար
Թռիչքի չեղարկում		Մինչև 5 000 ԱՄՆ դոլար
Թռիչքի բացթողում		Մինչև 1 000 ԱՄՆ դոլար
Միջանկյալ թռիչքի բացթողում		500 ԱՄՆ դոլար
Թռիչքի ուշացում (4 ժամ հետո)	300 ԱՄՆ դոլար	300 ԱՄՆ դոլար
Ուղեբեռի ուշացում (4 ժամ հետո)	300 ԱՄՆ դոլար	300 ԱՄՆ դոլար
Հարձակում	Մինչև 300 ԱՄՆ դոլար	Մինչև 500 ԱՄՆ դոլար
Բժշկական ապահովագրություն և հայրենադարձություն		Մինչև 750 000 ԱՄՆ դոլար
Տեղափոխում (էվակուացիա) և հայրենադարձություն	Մինչև 5 000 ԱՄՆ դոլար	
Հիվանդանոցային ծախսեր		Մինչև 1 500 ԱՄՆ դոլար
Անձնական գույքի կորուստ, վնասում, գողություն	Մինչև 250 ԱՄՆ դոլար	Մինչև 1 000 ԱՄՆ դոլար
Գումարի կորուստ	Մինչև 250 ԱՄՆ դոլար	Մինչև 250 ԱՄՆ դոլար
Ճանապարհորդական պատահարների արդյունքում առաջացած մարմնական վնասվածքներ	Մինչև 25 000 ԱՄՆ դոլար	Մինչև 500 000 ԱՄՆ դոլար
Անզգուշաբար այլ անձի առողջությանը կամ գույքին պատճառված վնասի փոխհատուցում		Մինչև 100 000 ԱՄՆ դոլար
Արտասահմանյան իրավական ծախսեր		Մինչև 5 000 ԱՄՆ դոլար
Վարձակալված տրանսպորտային միջոցների՝ պատահարներից ապահովագրություն	Մինչև 5 000 ԱՄՆ դոլար	Մինչև 10 000 ԱՄՆ դոլար

Visa Signature Limited Edition քարտի ապահովագրական ծածկույթների, փոխհատուցման սահմանաչափերի վերաբերյալ ամբողջական և վերջնական թարմացված տեղեկատվությունը կարելի է տեսնել www.cardholderbenefitson-line.com կայքում: Նշված կայքի և սույն գրքույկի միջև անհամապատասխանության դեպքում գերակայությունը տրվում է կայքի տեղեկատվությանը:

2.7
Գնումների ապահովագրություն

Visa Signature Limited Edition քարտապաններին տրամադրվում է գնումների ապահովագրության ծածկույթ, որը հնարավորություն է տալիս ապահովագրել քարտով կատարված գնումները գողությունից և վնասումից գնումը կատարելու օրվանից 365 օրվա ընթացքում:
Գնումների ապահովագրությունը գործում է ամբողջ աշխարհում քարտի գործողության ժամկետի ընթացքում:
Գնումների ապահովագրությունը կատարվում է ֆինանսական փոխհատուցման տեսքով՝ մինչև 20 000 ԱՄՆ դոլարի չափով:

Ապահովագրական պատահարի դեպքում քարտապանը պետք է կապ հաստատի աջակցման ծառայության հետ +971 (4) 253 6024 միջազգային հեռախոսահամարով կամ visaclaims@crawco.pl էլեկտրոնային հասցեով:

2.8
Միջազգային բժշկական և տեղեկատվական աջակցություն ճանապարհորդողների համար

Ճանապարհորդությունից առաջ և դրա ընթացքում քարտապաններին տրամադրվում են տարբեր բժշկական և ճանապարհորդական աջակցության ծառայություններ. քարտապանին տրամադրվում է բժշկական խորհրդատվություն՝ ներառյալ ճանապարհորդության համար պահանջվող պատվաստումների վերաբերյալ տեղեկատվությունը, բժշկական և իրավաբանական ծառայություններ մատուցողների, բժիշկների, բժշկական հաստատությունների և այլ համապատասխան անձանց և հաստատությունների կոնտակտային տվյալներ: Տրամադրվում է նաև տեղեկատվություն ճանապարհորդական վիզաների և բոլոր երկրների մուտքի պահանջների վերաբերյալ:

Շտապ բուժօգնության անհրաժեշտության դեպքում, երբ հեռախոսով հնարավոր չէ համարժեքորեն գնահատել քարտապանի վիճակը, հնարավոր է կազմակերպել նաև համապատասխան որակավորում ունեցող բժիշկի այցելություն:

Աջակցության ծառայությունների անհրաժեշտության դեպքում քարտապանը պետք է կապ հաստատի «International SOS» ընկերության հետ +971 (4) 253 6024 միջազգային հեռախոսահամարով:

2.9
Հյուրանոցների ամրագրումներ
agoda.com, Booking.com, Visa Luxury Hotel Collection.com կայքերում՝ արտոնյալ պայմաններով

Visa Signature Limited Edition քարտի քարտապանները կարող են կատարել հյուրանոցների ամրագրումներ ամբողջ աշխարհում և օգտվել հատուկ արտոնություններից, ինչպիսիք են՝

1. www.agoda.com կայքի միջոցով հյուրանոցի ամրագրում
Visa Signature Limited Edition քարտով ամրագրում կատարելու դեպքում տրամադրվում է մինչև 12 % զեղչ:

2. www.booking.com կայքի միջոցով հյուրանոցի ամրագրում
Visa Signature Limited Edition քարտով Booking.com-ում ամրագրում կատարելու դեպքում տրամադրվում է մինչև 7% գումարի վերադարձ Booking-ի Wallet Credit հաշվին՝ կացության ավարտից հետո:

3. Visa Luxury Hotels collection

- Ավելի քան 900 Luxury դասի հյուրանոցներ ամբողջ աշխարհում, որոնք տալիս են հետևյալ առավելությունները.
- Երաշխավորված լավագույն գին
- Check-in -ի ժամանակ սենյակի դասի բարձրացում (հնարավորության դեպքում)
- Ուշ check-out (հնարավորության դեպքում)
- VIP հյուրի կարգավիճակ
- Նախաճաշ երկու անձի համար յուրաքանչյուր օր
- 25 ԱՄՆ դոլար արժողությամբ միանվագ վաուչեր խմիչքների կամ սննդի համար հյուրանոցի ռեստորանում կամ բարում
- Ամրագրումներ կատարելուց առաջ անհրաժեշտ է առավել մանրամասն ծանոթանալ www.acba.am կայքում առկա համապատասխան տեղեկատվությանը:

Ամրագրումներ կատարելուց առաջ անհրաժեշտ է առավել մանրամասն ծանոթանալ www.acba.am կայքում առկա համապատասխան տեղեկատվությանը:

2.10
Մեքենաների ամրագրումներ Avis.com, Rentalcars.com, SIXT.com կայքերում՝ արտոնյալ պայմաններով

1. Avis մեքենաների վարձույթ
Visa Signature Limited Edition քարտով ավտովարձույթի ամրագրում կատարելիս տրամադրվում է մինչև 35% զեղչ:

2. Rentalcars.com մեքենաների վարձույթ
Visa Signature Limited Edition քարտով ավտովարձույթի ամրագրում կատարելիս տրամադրվում է 10% զեղչ:

3. SIXT.com մեքենաների վարձույթ
Visa Signature Limited Edition քարտով ավտովարձույթի ամրագրում կատարելիս տրամադրվում է մինչև 15% զեղչ:

Ամրագրումներ կատարելուց առաջ անհրաժեշտ է առավել մանրամասն ծանոթանալ www.acba.am կայքում առկա համապատասխան տեղեկատվությանը:

2.11
Անվճար ռոումինգ

Visa Signature Limited Edition քարտի քարտապանները հնարավորություն ունեն օգտվել Roamingo (3 գիգաբայթ) և Ucom (500 մեգաբայթ) անվճար ռոումինգ փաթեթներից իրենց ճանապարհորդության ընթացքում:

Առաջարկի վերաբերյալ առավել մանրամասն կարող եք ծանոթանալ www.acba.am կայքում:

2.12
BookingBash հավելվածի արտոնություններ

Visa Signature Limited Edition քարտի քարտապանները բացառիկ հնարավորություն ունեն BookingBash հավելվածում անվճար ակտիվացնել ULTIMATE տարեկան բաժանորդագրությունը և մինչև 50% զեղչով գնել ժամանցի այգիների, ջրաշխարհի, թանգարանների և էքսկուրսիաների տոմսեր աշխարհի բազմաթիվ երկրներում:

Առաջարկի վերաբերյալ առավել մանրամասն
կարող եք ծանոթանալ www.acba.am կայքում:

2.13
Concierge ծառայություն

Visa Signature Limited Edition քարտապանները ունեն բացառիկ հնարավորություն օգտվելու քարտի հետ տրամադրվող Concierge ծառայությունից, որը հնարավորություն է տալիս կազմակերպել ճանապարհորդությունը ամենաարդյունավետ կերպով: Concierge ծառայությունը հարմար է բոլոր նրանց համար, ովքեր սիրում են ճամփորդել, սակայն չունեն բավարար ժամանակ ճամփորդությունը կազմակերպելու համար: Այն տրամադրում է համապարփակ սպասարկում ճանապարհորդության ողջ ընթացքում:
Աշխարհի ցանկացած կետից հեռախոսով կամ առցանց 24/7 սկզբունքով քարտապաններին հասանելի են բազմաթիվ ծառայություններ, մասնավորապես

- **Թռիչքների ամրագրում**
- **Հյուրանոցների ամրագրում**
- **Ռեստորանների ամրագրում**
- **Մեքենաների վարձույթ**
- **Միջոցառումների տոմսերի ձեռքբերում**
- **Ճանապարհորդության պլանավորում**
- **Այլ ծառայություններ**

Concierge ծառայությունը անվճար է Visa Signature Limited Edition քարտապանների համար: Վճարում կատարվում է միայն Concierge ծառայության միջոցով պատվիրված ապրանքների ու ծառայությունների դիմաց:
Concierge ծառայությունից օգտվելու համար անհրաժեշտ է զանգահարել +1-303-967-1096 հեռախոսահամարով կամ օգտվել VisaConcierge chatbot ծառայությունից:

2.14
VisaConcierge Չատ-բոտ

VisaConcierge չատ-բոտը թույլ է տալիս Visa Signature Limited Edition քարտապաններին տեղեկանալ քարտի բոլոր արտոնությունների մասին մեկ վայրում: Միացնելով Chatbot-ը Viber կամ Telegram հավելվածներից որևէ մեկում՝ Դուք կարող եք ունենալ օնլայն օգնական, որը թույլ է տալիս կապ հաստատել Concierge ծառայության հետ՝ ամենօրյա խնդիրները արագ ու առանց ջանքերի լուծելու և տարատեսակ ծառայություններից օգտվելու համար, ինչպես նաև տեղեկանալ քարտի ճամփորդական առավելությունների, ներառյալ DragonPass սպասասրահներ անվճար մուտքերի, ճանապարհորդական ապահովագրության, միջազգային բժշկական և տեղեկատվական աջակցության և այլ հատուկ առաջարկների մասին:

2.15
Հաճախորդների աջակցության միջազգային ծառայություն (Global Customer Assistance Service (GCAS))

Որտեղ էլ որ լինեք, Հաճախորդների աջակցության միջազգային բազմալեզու ծառայությունը պատրաստ է օգնել ձեզ 24 ժամ, 365 օր:
Եթե Ձեր քարտը կորել է կամ գողացել են, ապա Visa-ի Հաճախորդների աջակցության միջազգային ծառայության ներկայացուցիչները կարող են.

- **30 րոպեի ընթացքում բլոկավորել քարտը զեղծարար գնումներից խուսափելու համար,**
- **կազմակերպել քարտի փոխարինում և այն ուղարկել Ձեզ 3 աշխատանքային օրվա ընթացքում,**
- **ապահովել կանխիկ դրամական միջոցների տրամադրում աշխարհի 270,000 կետերում:**

Դուք կարող եք զանգահարել Հաճախորդների աջակցության միջազգային ծառայությանը աշխարհի ցանկացած կետից +1-303-967-1096 հեռախոսահամարով:

Ծանուցում:

Սույն գրքույկում նշված պայմանների վերաբերյալ ամբողջական և վերջնական թարմացված տեղեկատվությունը կարելի է տեսնել www.acba.am և www.visa.com կայքերում: Նշված կայքերի և սույն գրքույկի միջև անհամապատասխանության դեպքում գերակայությունը տրվում է կայքերի տեղեկատվությանը:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Արամի 82-84, 0002, ք. Երևան, ՀՀ
www.acba.am | +374 10 31 88 99